Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-468[1]-13.12.2022-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի վերնագիր	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի վերանագրում դրված չակերտները հանել:	Ընդունվել է Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածը՝ վերնագրում դրված չակերտները հանվել են:	Ընդունվել է
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում օրենսգրքի լրիվ անվանման հիշատակումն համապատասխանեցնել Նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջին:	Ընդունվել է Հիմք ընդունելով Նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը՝ Նախագծի 1-ին հոդվածը	Ընդունվել է

				խմբագրվել է հետևյալ բովանդակությամբ. «1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.»	
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ պարբերությունը՝ դրանում ներառելով նաև վարչական տույժին վերաբերող հատվածը:	Ընդունվել է Հիմք ընդունելով այն, որ պարբերություն է հանդիսանում մեկ ամբողջական ավարտուն միտք արտահայտող հատվածը, Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ է շարադրվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ պարբերությունը:	Ընդունվել է